



ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ



ՀԻՄՆԱԿՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Թիվ 1(71), 28 փետրվար, 2025թ.
ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՈՒՆԻ



Ներքին գործերի նախարարի հրամանով ՆԳՆ կրթահամալիրի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Մանուկ Հովհաննեսի Մուրադյանը:

Մանուկ Հովհաննեսի Մուրադյանի կենսագրությունը՝
Ծննդյան տարեթիվ, ամսաթիվ, ծննդավայր
1979 թ. դեկտեմբեր 16, ք. Երևան
Կրթություն, գիտական աստիճան, կոչում
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, 063 մասնագիտական խորհրդի անդամ (ԺԲ.00.01 «Հանրային իրավունք»):
2018 թ. նախապատրաստվող դոկտորական ատենախոսության թեմա՝ «Սուբյեկտիվ իրավունքի չարաշահումը» (մեթոդաբանական և պատմատեսական հիմնախնդիրները), Հայ-ռուսական համալսարան:
2004-2007թթ. ՌԴ Կառավարման ակադեմիա, ասպիրանտուրա, (թեկնածուական ատենախոսության թեմա՝ «ՀՀ ընտրական համակարգի սահմանադրականության հիմունքները: Համեմատաիրավական վերլուծություն»):
2003-2004թթ. ՌԴ ՆԳՆ Կառավարման ակադեմիա, Գիտամանկավարժական կադրերի պատրաստման ֆակուլտետ (Իրավագիտություն մասնագիտությամբ, ավարտական թեզի թեմա՝ «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք առարկայի դասավանդման մեթո-

դաբանական հիմնախնդիրները»):
1996-2001թթ. ՀՀ ՆԳՆ ակադեմիա, Իրավաբանական ֆակուլտետ (դիպլոմավորված մասնագետ):
2007թ. շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, 2011թ.՝ դոցենտի գիտական կոչում:

Գիտական հետաքրքրությունների ոլորտը
Սահմանադրական իրավունք,
Վարչական իրավունք,
Մարդու իրավունքներ,
Պետության և իրավունքի ընդհանուր տեսություն:
2022 թ. Ուժային կառույցների ղեկավարների վերապատրաստման կուրսեր (ԱՄՆ):
2014-2015թթ. Հայաստանի Ամերիկյան համալսարան, Լեզվի շարունակական կրթության բաժին:
2008-2015 թթ. Մասնագիտական որակների բարձրացման կուրսեր (Բելգիա, Շվեյցարիա, Ավստրիա):
Աշխատանքային փորձը և մասնագիտական ներգրավվածությունը
2025 թ. հունվարի 17-ին ՆԳ նախարարի հրամանով նշանակվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետի ժամանակավոր պաշտոնակատար:
2021 թ. Նոյեմբերից՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ:
2019 թ. հոկտեմբեր – 2021 թ. նոյեմբեր – ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչության պետ:
2018 թ. հոկտեմբեր – 2019 թ. հոկտեմբեր – ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ:
2014-2018թթ. հոկտեմբեր – ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի պետ (ղեկան):
2009թ. ապրիլ-2014թ. հոկտեմբեր – ՀՀ ոստիկանության ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետ:
2007թ. մայիս – 2009թ. Ապրիլ – ՀՀ ոստիկանության ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունները կատարող:
2002-2007թթ. մայիս – ՀՀ ոստիկանության ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս:
2001թ. սեպտեմբեր – 2002թ. հունիս – ՀՀ ոստիկանության ակադեմիայի գիտական բաժնի գիտաշխատող:

2016թ. սեպտեմբերից մինչ օրս Հայ-ռուսական սլավոնական համալսարանի իրավունքի ինստիտուտի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պայմանագրային դասախոս:
2010թ. սեպտեմբերից մինչ օրս Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի պայմանագրային դասախոս:
2019թ. Ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պայմանագրային դասախոս:
2022 թվականից՝ Փաստաբանական ակադեմիայի դասախոս:

Պարբերաբար ներգրավված է եղել ոստիկանական բարեփոխումների տարբեր մակարդակի հանձնաժողովներում, իրավական բարեփոխումների ոլորտային հարցեր քննարկող աշխատանքային խմբերում:
Հեղինակ և համահեղինակ է ՀՀ ոստիկանության և ՆԳՆ գործունեությանը վերաբերող ոլորտային նախագծերի (օրենսդրական և ենթօրենսդրական):

Պարգևատրվել է՝
2020 թ. սեպտեմբեր – ՀՀ նախագահի հրամանագրով «Մխիթար Գոշ» մեդալով,
2020 թ. Աժ նախագահի շնորհակալագրով,
2019 թ. «Իրավակարգի ամրապնդման համար» Արամ Մանուկյան մեդալով,
2021 թ. «Ոստիկանությունում գերազանց ծառայության համար» կրծքանշանով,
2018 թ. «Ոստիկանության 100-ամյակ» հորեյանական մեդալով,
2012 թ. «Օրենքի պատվար» մեդալով:

Այլ տեղեկություններ
Վարժ տիրապետում է ռուսերենին և անգլերենին:

10 ուսումնական և գիտական ձեռնարկների, 3 մենագրության, մոտ 50 գիտական հոդվածների և զեկույցների հեղինակ:
Անկուսակցական է:

Անձնական տվյալներ
Ամուսնացած է: Ունի 2 դուստր և որդի:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ն ունի չորս պրոռեկտոր

			
ՄԻՍԱԿ ՄՍՐԿՈՍՅԱՆ	ԱՐՄԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	ԱՐՄԵՆ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	ԷՍԻԿ ՄՍՐԳՈՐՅԱՆ
ՊՐՈՌԵԿՏՈՐ	ՊՐՈՌԵԿՏՈՐ	ՊՐՈՌԵԿՏՈՐ	ՊՐՈՌԵԿՏՈՐ

Համաձայն 21-Ա հրամանի՝ Միսակ Մերուժանի Մարկոսյանը նշանակվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտորի պաշտոնին:
Համաձայն ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ղեկավարի պաշտոնակատար Մ. Մուրադյանի

20-Ա հրամանի՝ Արմինե Ալեքսանի Հայրապետյանը նշանակվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի միջազգային համագործակցության գծով պրոռեկտորի պաշտոնին:
Համաձայն 29-Ա հրամանի՝ Արմեն Էդիկի Սուքիասյանը նշանակվել է «Հայաստանի Հանրապետության ներքին

գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի անձնակազմի ղեկավարման և վարչական աշխատանքները համակարգող պրոռեկտորի պաշտոնին:
Համաձայն 34-Ա հրամանի՝ Էսիկ Արմենի Մարգարյանը նշանակվել է «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պրոռեկտորի պաշտոնին:

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԾՆՈՒՆԴԴ, ԳՆԱԿՆԵՐԻ ԲԱՆԱԿ՝ ԳՆԱԿԱՆԱԿԻ ԵՐԴՎՅԱՆ ԶԻՆՎՈՐ



Հայոց բանակը պարզապես զինված ուժերի համակարգ չէ, այլ մեր գոյության երդվյալ պահպանող, մեր հողի, մեր լեզվի, մեր պատվի ու մեր պատմության անսասան վահանը: Այն ծնվեց պայքարի բոցերի միջից, կոփվեց արյամբ ու զոհողություններով, բայց երբեք չծնկեց, երբեք չընկրկեց: Հայ զինվորը կանգնած է իր հայրենիքի սահմանին ոչ միայն որպես զինվոր, այլև որպես ժառանգ, որպես պարտքի ու պատվի կրող, որպես ժողովրդի հավերժական զենք ու վահան:

Հայոց բանակը չի կռվում միայն զենքով: Այն կռվում է հիշողությամբ, հավատով, կամքով: Այն կռվում է նրանց հոգով, ովքեր զնացին, բայց մեզ թողեցին ուժի, տուրքերով ու անմար երազանքի պատգամ: Այդ երազանքը մեկ անուն ունի՝ Հողթանակ:

Այսօր մենք ոչ միայն նշում ենք Հայոց բանակի տոնը, այլև վերահաստատում մեր ուխտը՝ ամուր կանգնելու, մեր հերոսների վաստակը չմոռանալու ու նրանց կիսատ թողած ուղին շարունակելու: Նրանք մեզ թողել են ոչ թե սուգ, այլ պատվիրան՝ ապրել այնպես, որ արդարացնենք նրանց ամեն մի նահատակված ակնթարթը:

Հայոց բանակը մեր հպարտությունն է, մեր հաղթանակների երաշխիքը, մեր վաղվա օրվա հավաստիքը: Եվ քանի դեռ կանգուն են նրա զինվորները, քանի դեռ նրանց սրտերում բաբախում է հաղթանակի անհագ ձգտումը, մեր երկիրը կապրի, մեր հողը կմնա անսասան, մեր ազատությունը՝ անմահ:

Փառք ու պատիվ Հայոց բանակին: Փառք ու խոնարհում նրանց, ովքեր ընկան, բայց երբեք չպարտվեցին:

**Ավետիսյան Մելիքյան
Իրավագիտության ֆակուլտետ,
4-րդ կուրս**

ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ը ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է ՏԵՐ ԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ՈՍԿԵՂԵՆԻԿ ԳՆԱԿՆԵՆԻՆ

Մեր լեզուն մեր տան ծուխն է, մեր կշիռն է աշխարհի մեջ:

Աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքին է արժանացել Մաշտոցի հրաշալի ստեղծագործության՝ հայկական այբուբենի կատարելությունը:

Դարեր շարունակ բռնակալները փորձել են ամեն գնով հայերին ծուլել իրենց և դա իրագործելու համար բռնացել են հայոց լեզվի վրա, սակայն գոյատևել է հայ ժողովուրդը, գոյատևում է հայոց լեզուն, որը հայ ժողովրդի ինքնությունը, ազգային անկախությունն ու մշակույթը պաշտպանելու հզոր զենք է եղել, անկողոպտելի գանձը: Օրհասական ճամփաներին հողից զրկված հայի նման իր լեզուն էլ ցրվել է աշխարհով մեկ, թերթիկներում սպի ու վերք՝ բազում մաշված ձեռագրեր անհետ կորել են դաժան մարտում, հազարավոր հին մագաղաթներ նահատակվել կամ էլ դարձել են սոված առնետի ու մկան բաժին:

Հայը, ցրվելով աշխարհով մեկ, թեկուզև սովորել է տարբեր լեզուներ, սակայն մի առանձին սիրով ու գուրգուրանքով պահպանել է իր մայրենին:

Մեր ժողովրդի բաբախող սիրտն է, ոգին ու սրբությունն է հայոց լեզուն, որն ապրեց, ապրում է ու ապրեցնում դարերի խորքից եկող, թափփուկ ու ինքնակոչ ոսոխին ծնկի բերած հարուստ մշակույթը:

Եվ ահա այսօր հպարտ ու անկոտրում տոնում ենք փետրվարի 21-ը՝ Մայրենի լեզվի միջազգային օրը, որը հռչակվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից:

Դարեր շարունակ մեր ժողովուրդը կորցրել է զահ և թագ, զորք և իշխանություն, ավեր և ավար են եղել մեր բերդերն ու քաղաքները, մեր ինչքն ու գույքը, բայց հայն այսօր ունի իր հայրենիքը, իր ինքնությունը հաստատող անձնագիրը՝ իր ոսկեղենիկ հայերենը, որի առաջ խոնարհվել է նույնիսկ Բայրոնը:

Վերծանելով աստվածաշնչյան գրվածքը՝ Բայրոնն ասել է.

«Դրախտը եղել է հենց Հայաստանում, որը վճարել է նույնքան թանկ, որքան Ադամի սերունդները: Հենց այնտեղ ջրերը հետ քաշվեցին ջրիեղեղից



հետո, և այնտեղ բաց թողեցին աղավնին: Բայց կարծես դրախտի անհետացման հետ սկսվեցին այս ազգի դժբախտությունները: Չնայած, որ ժամանակին այն հզոր թագավորություն էր՝ այն շատ հազվադեպ էր անկախ: Պարսկական սատրակներն ու թուրքական փաշաները հավասար չափով մեղսակից են այն երկրամասի քայքայմանը, որտեղ Աստված ստեղծեց մարդուն իր տեսքով և իր էությանը:

Ես սովորել եմ հայերի լեզուն, որպեսզի հասկանամ՝ ինչ լեզվով են խոսել աստվածները, քանզի հայոց լեզուն աստվածների լեզու է... Եվ Հայաստանն աստվածների հայրենիք է, աստվածներն էլ ծնունդով Արարատյան դաշտից են»:

Իրեն բաժին հասած արհավիրքներից, տարտարոսի փոթորիկներից հետո ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, մասնատվեց ու թուլացավ, բայց մեր ոսկեղենիկ հայերենը ծիրանով ծածկեց նրա հոգին, թշնամին փորձեց կտրել ոտքերը հայի, որ առաջ շարժվելու հնարավորություն չունենա, բայց մեր լեզուն թևեր տվեց նրան, որ ճախրի:

Մենք պարտավոր ենք անաղարտ պահել մեր Մայրենին, սրբագործել ու փառաբանել այն ոչ միայն փետրվարի 21-ին, Մաշտոցի ծննդյան օրը, Թարգմանչաց տոնին կամ Գրի, գիտելիքի ու դպրության օրը, այլ մշտապես:

Ուրեմն՝ մեր գոյատևման հզոր տաճարը թույլ չտանք, որ ավերեն, եկեք մեծ ակնածանքով վերաբերվենք մեր լեզվին, և որպեսզի գալիք սերունդները մեզ ներեն, եկեք խոսենք մաքուր հայերեն:

Ա. Բ.

ԿԱՅԱՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԿՐԹԱՅԱՍԱԼԻՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԵՐԸ



edupolice.am

Հունվարի 30-ին տեղի ունեցավ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական խորհրդի 2025 թվականի 1-ին նիստը: Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց ՀՀ ներքին գործերի նախարարի անվանական կրթաթոշակ ստացող սովորողներից ակադեմիայի չորս սովորողի համար 2024-2025 ուստարվա երկրորդ կիսամյակում պահպանել նախորդ կիսամյակում տրամադրվող կրթաթոշակը, քանի որ վերջիններիս նախորդ կիսամյակի ուսումնառության արդյունքներն ամփոփվել են գերազանց առաջադիմությամբ:

Գիտական խորհուրդը որոշեց բավարարել նախկինում Կրթահամալիրի ակադեմիայի հեռակա ուսուցման ֆակուլտետում սովորած և տարբեր պատճառներով Կրթահամալիրից ազատված վեց ուսանողի՝ վերականգնման համար ներկայացված դիմումները:

Հաջորդիվ Կրթահամալիրի խորհրդի նիստն էր, որի ընթացքում քննարկվեց 2024 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը՝ այն գնահատելով «լավ»:

ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ. ԱՅՍ ԵՐԵՔՆ ԵՆ ԿՅԱՆԵԻ ՇԱՐԺԻՉ ՈՒԺԵՐԸ



«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ գրուցել ենք ՀՀ ԵՊՆ կրթահամալիրի 4-րդ կուրսի սովորող Ջուլիետա Արշակյանի հետ:

անտեսելով այն մեծ պատգամը, որ դրանք իրենց մեջ կրում են: Հեքիաթները սովորեցնում են քաջություն, ազնվություն, սովորեցնում են, թե ինչ են սերն ու ընկերությունը: Եվ վերջապես, եթե դրանք անկարևոր լինեին, մեր մեծերը՝ Թունանյան, Աղայան և այլք, իրենց ամենաթանկ ռեսուրսը դրանց վրա չէին ծախսի:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Այո, կարծում եմ՝ կան: Բայց նաև ընդունում եմ հակառակ տեսակետը, որովհետև, ինչպես ասում են, ճաշակին ընկեր չկա:

- Ի՞նչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Կարծում եմ՝ մարդիկ, որոնք ինձ ճանաչում են, արդեն գիտեն՝ ինչ եմ ասելու, որովհետև այս տարիների ընթացքում բոլորի գլուխները տարել եմ: Ըստ իս՝ բոլոր մարդկանց երազանքը նույնն է, բոլորն էլ երազում են երջանկության մասին: Ցանկացած այլ երազանք ուղղակի միջոց է երջանիկ լինելու: Այլ հարց է, թե ինչպես են մարդիկ պատկերացնում երջանկությունը:

Ինձ համար երջանկությունը հանգստության մեջ է, դրա համար երազանքս ծերանալն է, որովհետև կարծում եմ, որ միայն այդ ժամանակ կարող եմ իսկապես հանգստանալ:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Ինչպես մշտի վերևում, շատ հետաքրքրասեր մարդ եմ: Դա արտահայտվել է նաև իմ նախասիրություններում: Սիրում եմ նկարել, երգել, ֆիլմեր դիտել, խնդիրներ լուծել, հետաքրքիր պատմություններ, առասպելներ կարդալ, շատ եմ սիրում ընկերներիս հետ գրուցել: Բայց եթե խոսենք այն մասին, թե ինչը կարող է ինձ կտրել իրական կյանքից, դա երևի երկինքն է: Կարող եմ ժամերով նայել ամպերին ու լռել: Շատ ժամանակ հարցնում եմ՝ ինչ եմ այդքան մտածում, ես էլ պատասխանում եմ՝ ոչինչ: Եվ իսկապես, այդ ժամանակ մտքերս նույնպես լռում են:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Մասնագիտության ընտրությունը շատ միանգամից է եղել: Կարծում եմ՝ դա մեծապես բխել է խոսելու և վիճելու նկատմամբ ունեցած մեծ սիրուց: Այն ժամանակ, երբ պետք է կողմնորոշվեի մասնագիտության ընտրության հարցում, չէի կողմնորոշվում, թե բազում մասնագիտություններից որն է, ի վերջո, ինչ: Այդ առաջին հայացքից բարդ թվացող ընտրությունը կայացվեց ընդամենը 1 րոպեում, երբ ընկերուհիս առաջարկեց միասին իրավաբան դառնալ: Եվ ես ընտրեցի իրավաբանությունը, իսկ նա՝ թյուրքագիտությունը: Մի հետաքրքիր փաստ պատմեմ: Երբ մայրիկիս ասացի, որ ուզում եմ իրավաբան դառնալ, ասաց, որ, ատամհատիկիս էլ էի իրավաբանի մասնագիտությունն ընտրել: Ինչպես ասում են՝ պատահական ոչինչ չի լինում:

- Ուսանողական տարիներ, ինչպիսի՞նք է ԵՊՆ կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Ընդհանուր առմամբ՝ ես հապճեպ որոշումներ կայացնող մարդ եմ, որովհետև եթե սկսեմ երկար մտածել, այդպես էլ երբեք ոչինչ չեմ որոշի: Ակադեմիայի ընտրությունը նույնպես այդպիսին էր. նույնիսկ հիմա չեմ կարող ասել՝ ինչու հենց Ակադեմիա: Բայց երևի, եթե

նորից ընտրելու հնարավորություն ունենայի, էլի կընտրեի Ակադեմիան, որովհետև չեմ ցանկանում ոչինչ փոխել, ինձ այստեղ սկսել է դուր գալ: Կարծում եմ՝ դա մեծապես կախված է այստեղի մարդկանցից՝ դասախոսական կազմից և հատկապես մեր խմբից: Մեր խմբում շատ հետաքրքիր միջավայր է ստեղծված, անշուշտ, դրանում մեծ դեր ունի հատկապես մեր խմբի ավագը:

- Մի քանի բառով նկարագրիր ԵՊՆ կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Ինձ թվում է՝ չի կարելի առանձնացնել մի կերպար, որ հատուկ կլինի բոլոր սովորողներին՝ անկախ բուհից, որովհետև մենք բոլորս անհատականություններ ենք և ունենք մեր առանձնահատկությունները: Առհասարակ, կարծում եմ, որ որոշակի խումբ կազմող մարդիկ չեն կարող ամբողջությամբ տեղավորվել մի կերպարի մեջ, եթե, իհարկե, այդ կերպարը պարտադրված չէ: Նույնիսկ այս դեպքում այդ կերպարը զուտ արտաբեր, կեղծ կհնչի:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունը, ի՞նչ կընտրեիր:

- Այս թեմայով շատ եմ մտածել: Փոքր հասակում ցանկանում էի դառնալ դերասանուհի, որպեսզի բոլոր մասնագիտությունների մարդկանց դերերը խաղամ: Ինձ շատ մասնագիտություններում եմ պատկերացնում, բայց երևի եթե չլինեի իրավաբան, ապա կլինեի հնէաբան, փիլիսոփա կամ աստվածաբան: Ինչպես տեսնում եք, պատասխանը միանշանակ չէ. մի բան հաստատ կարող եմ ասել. բժիշկ չեի կարող լինել:

- Թե՛նա, որի շուրջ անդադար կխոսես:

- Կարծում եմ՝ այդ թեման կյանքն է՝ իր սկզբով, ընթացքով և տրամաբանական կամ էլ ոչ այնքան տրամաբանական ավարտով:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Հարցը կարողալուց միանգամից հիշեցի բանավոր գրված «ՀՈՒՅՍ, ՀԱՎԱՏ, ՍԵՐ» արտասխանությունը: Ժողովրդի իմաստությունը սահմաններ չունի: Ըստ իս՝ հենց այս երեքն են կյանքի շարժիչ ուժերը՝ հույսը ապագայի հանդեպ, հավատն Աստծո, քո և մարդկանց նկատմամբ և սերն աշխարհի հանդեպ:

Բից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կընտրեցես ինքդ քեզ:

- Ժպտե՛րես, ծուլ, մարդկային:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Ժամը քանի՞սն...

- Օրն սկսում ես ժամը...

- 7-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- Եղե՛ք օձերի պես խորագետ և աղավիհների պես միամիտ:

- Սիրելի զբաղմունքը:

- Զնել:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Հիշե՛ք, որ կյանքում մենք ենք ընտրում՝ լինել երջանիկ, թե՞ դժբախտ, ամեն ինչ սկսվում է մեր մտքերից, դրա համար ընտրեք երջանիկ լինելը:

- Իսկ վերջում... (ավելացրու այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին):

- Տեսնես ի՞նչ եմ մտածելու այս հարցազրույցը կարդացողները:

Հարցազրույցը վարեց առաջատար մասնագետ

Լիանա Սահակյանը

Ստեղծագործում են մերոնք

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀ



Հայաստան աշխարհ, երկիր Ավետյաց,

Աստվածային հո՛ղ հզոր մեր նախնյաց,

Ծիլ ու ծաղկատան մարդկության համար, Նոյի գալստյան սուրբ բնակավայր:

Հայաստան աշխարհ, երկիր Ուրարտու, Մեծ արքաների հայրենիքն էս դու, Հին Երեբունի՛ դարձած Երևան, Բաց երկնքի տակ գանձ ու թանգարան:

Հայաստան աշխարհ, երկիր Նաիրի, Խաչվող ճամփեքում անցած դարերի Թաց վերքերի մեջ մնացիր կանգուն՝ Մեր լեռների պես հպարտ, աննկուն:

Հայաստան աշխարհ, քարերի երկիր, Հինավուրց վանքեր, մագաղաթ ու գիր, Շեն ու քաղաքներ, բերդեր անառիկ Ու ճակատագրով՝ հավերժ բացառիկ:


Հայաստան աշխարհ, հայերի մեր տուն, Կաս ու կմնաս հարատև արթուն, Քաջերի ոգին՝ մեզմից անբաժան, Կյանքի խորհուրդն է քո անմահության:

ԵՐԿԻՐ ԻՄ ՀԱՅՎԱՆ

Ուզում եմ տեսնել դաշտերն արծակ, Նստել մասրենու ծաղկած թփի տակ, Վաղորդյան ցողի վրայով քայլել, Գարնան բուրմունքը սրտիս մեջ առնել, Արևի շողից անվերջ տաքանալ, Բնության զրկում մի քիչ մանկանալ, Լուռ ականջ դնել քամու ձայներին, Խառնվել նրա դողացող խաղին, Պարզել թևերս լայնակի, ազատ եվ օդը շնչել հողիս հարազատ: Ուզում եմ ելնել լեռները քարոտ, Երկինքը տեսնել մռայլ, մշուշոտ, Տիրակալ դառնալ հսկա բարձունքին Ու խրոխտ ձայնով դիմել ամենքին. Հիշե՛ք, ծնվում եմ քաջերն անկոտրում Մի բուռ մնացած Հայաստան հողում, Որ ամեն հայի սուրբ կյանքի համար Նորեն կդառնան զինվոր, զորավար, Կտան յուր վերջին մարտը պատմական, Որ աշխարհի մեջ երկիրն իմ Հայկյան Լինի հարատև ու միշտ հաղթական:

Կարինե Կիրակոսյան
նստիկանության պաշտոնաթղ գնդապետ

ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ



Այս երկու տղամարդիկ նույն անուններով բանտարկվել են նույն բանտում: Նրանք իրար չափազանց նման էին, սակայն երբեք իրար չեն հանդիպել, իրար հետ որևէ արյունակցական կապ չունեին: Նրանք էլ պատճառ դարձան, որ դրանից հետո դատական համակարգում սկսեցին օգտագործել մատնահետքերը: